



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

23 հունիսի 2022 թվականի N 929-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N 730-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1387-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից իրականացվող ոչ պարենային արտադրանքների և ծառայությունների նկատմամբ պետական վերահսկողության իրականացման ստուգաթերթերը հաստատելու մասին» N 730-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) N 3 հավելվածում ստուգաթերթի և հարցաշարի անվանումներում «ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ԲԵՆՁԻՆԻ, ԴԻՋԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ ԵՎ ՄԱՋՈՒԹԻ» բառերը փոխարինել «ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ԵՎ ԱՎԻԱՑԻՈՆ ԲԵՆՁԻՆԻ, ԴԻՋԵԼԱՅԻՆ

ԵՎ ՆԱՎԱՅԻՆ ՎԱՌԵԼԻՔԻ, ՌԵԱԿՏԻՎ ՇԱՐԺԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԱՌԵԼԻՔԻ ԵՎ ՄԱԶՈՒԹԻ» բառերով.

2) N 3 հավելվածի հարցաշարը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-17-րդ կետերով՝

«8.	Արդյո՞ք ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքը համապատասխանում է ցանկ 5-ով սահմանված անվտանգության պահանջներին:	կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.8-րդ կետ	փորձաքննություն	2.0				
9.	Արդյո՞ք ավիացիոն բենզինը համապատասխանում է ցանկ 6-ով սահմանված անվտանգության պահանջներին:	կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.10-րդ կետ	փորձաքննություն	2.0				
10.	Արդյո՞ք նավային վառելիքը համապատասխանում է ցանկ 7-ով սահմանված անվտանգության պահանջներին:	կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.12-րդ կետ	փորձաքննություն	2.0				
11.	Արդյո՞ք հեղուկ վառելիքի մանրածախ առևտրի կետերում վաճառողն ունի 5 լ անվանական տարողությամբ ստուգաչափված տարա:	«Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 9-րդ հոդվածի 17.2-րդ կետ, ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի N 537-Ն որոշման հավելվածի (այսուհետ՝ որոշում) 7-րդ կետ	տեսազննում	0.8				
12.	Արդյո՞ք հեղուկ վառելիքի մանրածախ առևտրի կետերում վաճառողը սպառողի պահանջով հեղուկ վառելիքի վաճառքն իրականացնում է 5 լ անվանական տարողությամբ ստուգաչափված տարայի միջոցով:	օրենքի 6-րդ հոդվածի 17.2-րդ կետ, որոշման 7-րդ կետ	տեսազննում	1,1				
13.	Արդյո՞ք չափանոթների հարաբերական սխալանքը $20\text{ }^{\circ}\text{C} \pm 10\text{ }^{\circ}\text{C}$ ջերմաստիճանի դեպքում չի գերազանցում $\pm 0,5\%$ -ը:	որոշման 8-րդ կետ	տեսազննում	0.3				
14.	Արդյո՞ք վառելիքաբաշխիչ աշտարակի ցուցատախտակի վրա արտացոլված քանակության և չափանոթի անվանական տարողության նիշի տարբերությունը չի գերազանցում 1%-ը:	որոշման 9-րդ կետ	տեսազննում	0.5				

15. Արդյո՞ք չափանոթի բկանցքի թափանցիկ մասի սանդղակը զետեղված է այնպես, որ դրա դիրքը հնարավոր չէ փոփոխել առանց կապարակնիքի խախտման:	որոշման 16-րդ կետ	տեսագնում	0.1				
16. Արդյո՞ք չափանոթի բկանցքի թափանցիկ մասը կամ թափանցիկ մակարդաչափ խողովակը պատրաստված է թափանցիկ և անգույն ապակուց և չունի հեղուկի մակարդակին հետևելուն խոչընդոտող թերություններ:	որոշման 17-րդ կետ	տեսագնում	0.1				
17. Արդյո՞ք աստիճանավորված բկանցքով չափանոթների համար սանդղակի վրա նշագծերը կայուն են և հստակ տեսանելի, ընթեռնելի՝ ապահովելով դրա շահագործման ամբողջ ընթացքում սանդղակի և նշագծերի ամբողջականությունը, հստակությունն ու վերջինիս ջնջվելու (մաքրվելու) հնարավորության բացառումը:	որոշման 19-րդ կետ	տեսագնում	0.1				».

3) N 3 հավելվածի հարցաշարի 4-րդ, 5-րդ և 7-րդ կետերի 5-րդ սյունակներում «5.0» թվերը համապատասխանաբար փոխարինել «2.0» թվերով.

4) N 3 հավելվածի N 4 ցանկը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ցանկ N 4

Մագուլթի բնութագրերին ներկայացվող պահանջները

Մագուլթի բնութագրերը	Չափման միավորը	Չափաքանակը՝ նավատորմային մագուլթի համար	Չափաքանակը՝ ջեռուցման մագուլթի համար
Ծծմբի զանգվածային մասը, ոչ ավելի	%	2,0	3,5
Բոնկման ջերմաստիճանը բաց հալքանոթում, ոչ ցածր	°C	-	90
Բոնկման ջերմաստիճանը փակ հալքանոթում, ոչ ցածր	°C	80	-
Ծծմբաջրածնի պարունակությունը, ոչ ավելի	մասնիկ/միլիոն ppm	10	10

5) N 3 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ NN 5, 6 և 7 ցանկերով՝

**Ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքի բնութագրերին
ներկայացվող պահանջները**

Ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքի բնութագրերը	Չափման միավորը	Չափաքանակը՝ թոփչքի մինչձայնային արագությամբ թռչող ապարատների համար		
		Ջեթ Ա-1	SU-1	Ռ-S
Կինեմատիկ մածուցիկությունը մինուս 40°C ջերմաստիճանային պայմաններում, ոչ ավելի	մմ ² /վ	-	-	16
Կինեմատիկ մածուցիկությունը մինուս 20°C ջերմաստիճանային պայմաններում, ոչ ավելի	մմ ² /վ	8	-	-
Բյուրեղացման սկզբի ջերմաստիճանը, ոչ բարձր	°C	-	մինուս 50	մինուս 50
սառչելու ջերմաստիճանը, ոչ բարձր	°C	մինուս 47	-	-
Մեխանիկական խառնուկների և ջրի պարունակությունը	-	բացակայում է	բացակայում է	բացակայում է
Ֆրակցիոն կազմը՝				
10 տոկոսը թորահանվում է ջերմաստիճանային պայմաններում, ոչ բարձր	°C	205	165	175
90 տոկոսը թորահանվում է ջերմաստիճանային պայմաններում, ոչ բարձր	°C	-	230	270
98 տոկոսը թորահանվում է ջերմաստիճանային պայմաններում, ոչ բարձր	°C	-	250	280
թորագտումից մնացորդը, ոչ ավելի	%	1,5	չի նորմավոր- վում	1,5
թորագտումից կորուստները, ոչ ավելի	%	1,5	չի նորմավոր- վում	1,5
Չմրտող բոցի բարձրությունը, ոչ պակաս կամ նաֆթալինային ածխաջրածինների ոչ ավելին 3% ծավալային բաժնում, ոչ պակաս	մմ	25	25	25
	մմ	19	-	-
Բոնկման ջերմաստիճանը փակ հալքանոթում, ոչ ցածր	°C	38	28	28
Արոմատիկ ածխաջրածինների ծավալային (զանգվածային) մասը, ոչ ավելի	%	25	20 (22)	20 (22)
Փաստացի խեժերի պարունակությունը, ոչ ավելի	մգ/100մմ ³	7	5	4
Ընդհանուր ծծմբի զանգվածային մասը, ոչ ավելի	%	0,25	0,20	0,10
Մերկապտանային ծծմբի զանգվածային մասը, ոչ ավելի	%	0,003	0,003	0,003
Ջերմաթթվեցման կայունությունը ստուգիչ ջերմաստիճանային պայմաններում, ոչ ցածր	°C	260	260	260 (275)*
ճնշման անկումը ֆիլտրի վրա, ոչ ավելի	մմ սս	25	25	25
նստվածքների գույնը խողովակի վրա (ոչ բնորոշ նստվածքների բացակայության դեպքում), ոչ ավելի	Միավորներն ըստ գունային սանդղակի	3	3	3
Տեսակարար էլեկտրահաղորդականությունը**	պՄմ/մ			

առանց հակաստատիկ հավելանյութի, ոչ ավելի		10	10	10
հակաստատիկ հավելանյութով		50-600	50-600	50-600
*սպառողների պահանջով թույլատրվում է որոշել վառելիքի համար ջերմաթթվեցման կայունությունը 275°C-ից ոչ ցածր ջերմաստիճանային պայմաններում				
** որոշվում է արտադրության նախապատրաստման փուլում և երաշխավորվում է արտադրողի կողմից				

Ցանկ N 6

Ավիացիոն բենզինի բնութագրերին ներկայացվող պահանջները

Ավիացիոն բենզինի բնութագրերը	Չափման միավորը	Չափաքանակները
Օկտանային թիվը՝ ըստ շարժիչային մեթոդի, ոչ պակաս	-	91
Տեսակայնությունը* (հարուստ խառնուրդ), ոչ պակաս	-	115
Բյուրեղացման սկզբի ջերմաստիճանը, ոչ բարձր	°C	մինուս 60
Մեխանիկական խառնուկների և ջրի պարունակությունը	-	բացակայում է
Հազեցած գոլորշիների ճնշումը	կՊա	29,3 - 49
Ֆրակցիոն կազմը՝		
10 տոկոսը թորահանվում է ջերմաստիճանային պայմաններում, ոչ բարձր	°C	82
50 տոկոսը թորահանվում է ջերմաստիճանային պայմաններում, ոչ բարձր	°C	105
90 տոկոսը թորահանվում է ջերմաստիճանային պայմաններում, ոչ բարձր	°C	170
թորագտումից մնացորդը, ոչ ավելի	%	1,5
թորագտումից կորուստները, ոչ ավելի	%	1,5
Փաստացի խեժերի պարունակությունը, ոչ ավելի	մգ/100 սմ3	3
Ընդհանուր ծծմբի զանգվածային մասը, ոչ ավելի	%	0,03
Գոյնը	-	Կանաչ
* որոշվում է արտադրության նախապատրաստման փուլում և երաշխավորվում է արտադրողի կողմից		

Ցանկ N 7

Նավային վառելիքի բնութագրերին ներկայացվող պահանջները

Նավերի համար նախատեսված վառելիքի բնութագրերը	Չափման միավորը	Չափաքանակները
Ծծմբի զանգվածային մասը, ոչ ավելի	%	0,5
Բոնկման ջերմաստիճանը փակ հալքանոթում, ոչ ցածր	°C	61

Նշում. Մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներքին ջրային փոխադրումներում մասնակցող նավերի համար թույլատրվում են 1,5%-ից ոչ ավելի ծծմբի զանգվածային մասով՝ նավերի համար նախատեսված վառելիքի արտադրությունն ու շրջանառության մեջ դնելը:».

6) N 3 հավելվածի «Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝» պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ և 3-րդ կետերով՝

«2. «Առևտրի և ծառայությունների մասին» օրենք

3. ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի N 537-Ն որոշում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով N 3 հավելվածում լրացվող 11-17-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2022 թվականի հոկտեմբերի 20-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան